

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դասվար

(առարկա)

ԹԵՄԱ՝ «Տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործումը
դասապրոցեսում»

Կազմեց՝

Աղամալյան Արևիկ Համլետի

(անուն, ազգանուն, հայրանուն)

Լեզվագի միջնակարգ դպրոց

(դպրոցի անվանումը)

Ղեկավար՝

Լուսինե Բալայան

«Կապանի N2 ավագ դպրոց» ՊՈԱԿ

(վերապատրաստող կազմակերպության անվանումը)

Կապան 2023

Բովանդակություն

Գլուխ առաջին

1. Ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրումը ուսուցման գործընթացում

1.1. Կրթության արդի տեխնոլոգիաներ

1.2. Բնտերնետի ներթափանցումը կրթական համակարգ

1.3. Համակարգչային տեխնոլոգիաների կիրառումը ուսուցման գործընթացում

Գլուխ երկրորդ

2. Փորձարարական աշխատանքի նկարագրություն և արդյունքների վերլուծություն

2.1 Փորձարարական աշխատանքի վերլուծություն և ամփոփում


2.2 Եզրակացություն

2.3 Գրականություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ



Կրթությունը առողջ և զարգացած հասարակության հիմքն է, ինչպես նաև քաղաքացիական մշակույթի և ժողովրդավարական քաղաքականության գործընթացներում իթանող կարևոր գործոն, որն անբաժանել է հասարակությունից:



Հասարակական զարգացման ներկայիս շրջանը բնորոշվում է կյանքի բոլոր ոլորտներում տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների զանգվածային կիրառմամբ՝ ապահովելով տեղեկատվական հոսքերի տարածումը և ստեղծելով գլոբալ տեղեկատվական տարածություն: Հասարակական նման զարգացման անբաժանելի մասն է հանդիսանում կրթության ինֆորմատիզացումը: Տեղեկատվահաղորդակցական տեխնոլոգիաներն ակտիվորեն կիրառվում են կրթության ոլորտում՝ ոտրպես տեղեկատվության փոխանցման, պահպանման, վերամշակման, կրթական ոլորտի սուբյեկտների միջև փոխազդեցության ապահովման միջոց:

Տեղեկատվական գիտելիքների վրա հիմնված հասարակությունը պահանջում է կրթական նոր մոտեցումներ, ուստի տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը տարեցտարի ընդարձակվում է:

Մեր պետությունը որդեգրել է գլոբալացման մի գործընթաց, որի սկիզբը համարում է հոգևոր և կրթամշակութային փոփոխությունները՝ համաձայնեցրած եվրոպական և ամերիկյան արժեքների հետ:

Համաձայն «ՀՀ Կրթության զարգացման 2011-2015 թվականի պետական ծրագրի» ուսումնական գործընթացում տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների՝ որպես ուսուցման և դասավանդման միջոցի կիրառման ընդլայնումը, հանդիսանում է կրթության զարգացման հիմնական ծրագրային ուղղություններից մեկը: Այն ենթադրում է ոչ միայն ուսումնական

հաստատությունների համալրումը համակարգչային սարքավորումներով և «Ինֆորմատիկա» առարկայի դասավանդման բարելավումը, այլև տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը տարբեր առարկաների ուսուցման գործընթացում:



Աշխատանքը նվիրված է ինտերնետ տեխնոլոգիաների դերին և նշանակությանը կրթության գործընթացում: Այն ստեղծվել ու մշակվել է՝ նպատակ ունենալով տարբեր երկրներում աշխատող հետազոտողների միջև ապահովել տեղեկատվության ազատ և արագ փոխանակմանը: Այսօր ինտերնետում տեղադրված են մեծածավալ կրթական պաշարներ, որոնք անընդհատ թարմացվում են:

Այսօր անհնար է աշխարհը պատկերացնել առանց տեղեկատվական ցանցի: Ավանդական ուսուցիչ-աշակերտ-դասագիրք սխեմային ավելանում է մի նոր օղակ՝ համակարգչային ուսուցումը:

Այն էապես փոխում է կրթություն ստանալու եղանակները և հնարավորությունները: Ինտերնետի շնորհիվ ի հայտ են եկել առցանց կամ օնլայն գրադարանները, հեռավար ուսուցման դասընթացները և բազմաբնույթ այլ ուսումնական նյութեր, որոնց մասին առավել հանգամանալից խոսվում է աշխատանքում:



Ինտերնետը աշակերտակենտրոն ուսուցում է ապահովում, ուսումնական գործընթացը դառնում է ավելի անհատական, քանի որ համակարգչի կիրառումը թույլ է տալիս ուսուցչին ավելի անհատականորեն տալ գիտելիքներ այս կամ այն սովորողին:

Ինտերնետը սովորողներին հնարավորություն է տալիս զարգացնել լեզվական կարողություններն ու կիսել մշակութային արժեքները տարբեր նախագծերին մասնակցելու շնորհիվ: Դա ավելի արագ և ավելի արդյունավետ է և ուսումնական ճամփորդության ծախսեր չի պահանջում:

Կարևոր նորամուծություն է ինտերակտիվ ուսուցումը, որը մեծացնում է աշակերտների դերը կրթության գործառույթներում, օգնում նրանց՝ առավել բացահայտել իրենց զանազան հմտություններն ու կարողությունները:

Նոր տեխնոլոգիաները ենթադրում են բազմազան, հարուստ կրթական միջավայր: Դրանք նպաստում են հետաքրքրասիրության, մղում են հայտնաբերումների, հայտնագործող փորձերի՝ մեծ չափով նպաստելով և հարստացնելով ուսումնական գործընթացը: Կրթական համակարգը ամեն կերպ

պետք է աջակցի ուսուցման կազմակերպմանը՝ սովորողների համար ստեղծելով համապատասխան պայմաններ և ապահովելով դրանց արդյունավետ կիրառումը:

Աշխատանքի նպատակն է ցույց տալ կրթության գործընթացի արդյունավետության ապահովումը ինտերնետ և նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաների միջոցով:

Հետազոտության նպատակին հասնելու համար պետք է լուծել մի շարք խնդիրներ՝

- ուսումնասիրել և ներկայացնել նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաների էությունն ու նպատակը կրթական համակարգում,

- ի՞նչ կարևոր կողմեր ունի ուսումնական գործունեությունը համակարգչային ուսուցման ընթացքում,

- հասկանալ՝ ինչու՞ համար են անհրաժեշտ տեղեկատվական տեխնոլոգիաները ժամանակակից դասավանդման գործընթացում և զարգացման ի՞նչ միտումներ են առկա,

- ինտերնետի դերը կրթական ոլորտի զարգացման վրա,

- ի՞նչ փուլում է այսօր Հայաստանում հանրակրթության ոլորտը,

- ի՞նչ առանձնահատկություններ ունի ուսումնական գործընթացը ինտերնետ և համակարգչային տեխնոլոգիաների գործածության ժամանակ,

- ի՞նչ հնարավորություններ են ընձեռում նորարական տեխնոլոգիաները ուսուցանվողներին,

- որո՞նք են նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաների առանձնահատկություններն ու թերությունները,

- որո՞նք են դարաշրջանի նորարարություններները, որոնք ներգրավվել են կրթության ոլորտ (էլեկտրոնային գրադարաններ, էլեկտրոնային գրքեր, հեռավար ուսուցում):

ԳԼՈՒԽ 1

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՆԵՐԴՐՈՒՄԸ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

1.1 Կրթության արդի տեխնոլոգիաներ

Մեզ շրջապատող իրականությունը փոխվում է օրեցօր, ժամ առ ժամ: Անընդհատ փոփոխվում են նաև տեխնոլոգիաները, կատարելագործվում են, հայտնվում են նորերը՝ գործածությունից հանելով հներին: Ուստի անհրաժեշտություն է առաջանում փոփոխել դասավանդման և ուսուցման նախկին մեթոդները, կրթական համակարգ ներմուծել նոր մոտեցումներ, նոր մեթոդներ:

Հայաստանի հանրապետությունում, ներկա ժամանակաշրջանում, ընթանում է կրթական նոր համակարգի ձևավորում, որը կողմնորոշված է մուտք գործելու համաշխարհային տեղեկատվական-կրթական տարածություն: Այդ գործընթացն ուղեկցվում է ուսումնադաստիարակչական գործընթացի մանկավարժական տեսությունում և պրակտիկայում տեղի ունեցող փոփոխություններով, որոնք կապված են կրթության տեխնոլոգիաների բովանդակության մեջ սրբագրումների հետ: Վերջիններս պետք է համանման լինեն նորագույն տեխնոլոգիաների հնարավորությունների հետ և նպաստեն աշակերտի և ուսանողի տեղեկատվական տեղեկատվական հասարակարգ մուտքին: Հենց դրան էլ նպասատում է ուսուցման գործընթացում տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրումը:[4,31]

Նոր տեխնոլոգիաները նպաստում են կրթության որակի բարձրացմանը, դրանց կիրառումը որակապես փոխում է դասախոսի դերը, երկար և անհրապույր դասախոսություններին փոխարինում են նոր մեթոդներն ու միջոցները:

Առանց տեղեկատվական ու հաղորդակցական տեխնոլոգիաների, մեր օրերում աներևակայելի է առաջընթացը պետական և հասարակական գործունեության ցանկացած բնագավառում:

Համապատասխան ենթակառուցվածքի զարգացումը, տեղեկատվական հասարակության ստեղծումը և համաշխարհային տեղեկատվական ոլորտում ակտիվորեն ներգրավվելը մեր երկրի առաջնային խնդիրն է համարվում: Այս խնդրի հաջող լուծմանը վճռորոշ նշանակություն է շնորհվում՝ այնպիսի ռազմավարական նպատակների հասնելու համար, ինչպիսիք են ժողովրդավարական, ազատ և իրավական պետության ստեղծումը, քաղաքացիական հասարակության զարգացումը, երկրի անվտանգությունը, մարդու իրավունքների պաշտպանությունը և այլն:

Այստեղ մեծ է նաև պետության դերը, քանի որ պետք է ապահովի՝

- տեղեկատվա-հաղորդակցական ոլորտի սուբյեկտներին տվյալ համակարգի տեղեկատվական ռեսուրսների պարզ, հարմար և հուսալի հասանելիության ապահովումը,

- տեղեկատվա-հաղորդակցական ոլորտի գործունեության հուսալիությունը, ինչը ենթադրում է աշխատանքի բարձր կազմակերպվածություն,

- ճկունությունը, զարգացման հնարավորությունը՝ ներառյալ կարողությունը փոխելու աշխատանքի պայմանները, չափորոշիչներն ու բնութագրերը օբյեկտիվ և սուբյեկտիվ հանգամանքներով պայմանավորված պահանջմունքներից ելնելով:

Ուսումնական գործընթացում տեղեկատվական ու հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումը մի քանի կարևոր կողմեր ունի մասնավորապես,

- տեղեկատվական ու հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումը նպաստում է առարկաների միջև կապի դրսևորմանը: Դա առանձնապես կարևոր է ուսուցման տարրական աստիճանում, երբ ուսումնական առարկաների մեծ մասն ինտեգրված է դասավանդվում:

- Տեղեկատվական ու հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումը նպաստում է ստեղծագործական ու նորարարական մոտեցումների զարգացմանը, ինչը չափազանց կարևոր է հիմնախնդիրների վրա հիմնված կառուցողական դասարանային միջավայր ստեղծելու համար:

- ՏՀՏ-ի գործածությամբ հնարավոր է այնպիսի ակներևություններ ստեղծել, որոնք անհրաժեշտ են հասկացություն, օբյեկտ և ընթացակարգ ներմուծելիս: Դրա օրինակներն են, թվաբանական գործողություններ թվերով, երբ այդ գործողությունների իրականացումը, հիմնականում, տեղի է ունենում առարկայական ակներևություններ սովորելը, երբ անձանոթ բառերն ու արտահայտություններն աշակերտները կապում են համապատասխան գրաֆիկիական արտահայտության հետ, այնպիսի բնական երևույթների կեղծակերպում, որոնց դիտարկումն անհնար է կամ չափազանց դժվար է իրական հանգամանքում:

- ՏՀՏ-ի գործածությունը կարող է առավել արդյունավետ ու ինտենսիվորեն նպաստել ազգային ուսումնական պլանով նախատեսված կարողությունների ու

հմտությունների զարգացմանը: Այդպիսիք են, օրինակ՝ թե՞ տեսողական, թե՞ քանակական օրինաչափությունների հայտնաբերման կարողությունը (առարկաների հաջորդականության օրինաչափությունը, գրաֆիկական պատկերի օրինաչափությունը, քանակական փոփոխության օրինաչափությունը), օբյեկտների չափերը գտնելու և գնահատելու կարողությունը, տեղեկատվությունը վերածելու և ձևաչափը մյուսով փոխարինելու կարողությունը, օրինակ՝ տեքստային նյութի համար գրաֆիկական պատկեր ընտրելը և ընդհակառակը, բառերով նկարագրված քանակական տեղեկատվությունը պատկերելը և ընդհակառակը, տարածության ընկալումը, համագործակցության կարողություններն ու հմտությունները, աշխատանքային միջավայրի պատրաստումը և անհրաժեշտ միջոցներ ընտրելու կարողությունը:

Տեղեկատվական անվտանգության պարզաբանման համար կարևորվում է ոչ միայն տեղեկատվություն հասկացության պարզաբանումն ու մեկնաբանությունը, այլ

«ապատեղեկատվություն» հասկացության պարզաբանումը: Ապատեղեկատվությանը բնորոշ են տեղեկատվության բոլոր հատկանիշները՝ բացառությամբ իմաստի, էության: Ապատեղեկատվությունը պարունակում է կեղծ և աղավաղված տվյալներ առարկաների և երևույթների մասին: Դրա տարածումը և ստացումը ստեղծում է աղավաղված պատկերացում իրերի և երևույթների, նրանց որակական և քանակակն բնութագրիչների մասին՝ հանգեցնելով մոլորության և սխալ որոշումների կայացման:

Բացի նրանից, որ ՏՀՏ-ի գործածությունն աշակերտներին աջակցում է տարբեր ուսումնական առարկաներով նախատեսված արդյունքները ձեռք բերելու մեջ, այն նպաստում է նաև հենց ՏՀՏ-ի հետ կապված իրազեկությունների զարգացմանը: Իսկ դա կարևոր է ժամանակակից կյանքում անհրաժեշտ թվայնացված գրագիտություն ձեռք բերելու համար: Կարելի է ասել, որ թվայնացված գրագիտությունը նույնպես, ինչպես քանակական գրագիտությունը, ոչ պակաս կարևոր է, քան ավանդական հասկացությամբ գրագիտությունը: Այսպիսով, տարրական աստիճանում ՏՀՏ գործածելիս ոչ պակաս ուշադրություն պետք է դարձվի այնպիսի իրազեկությունների

ձևավորմանն ու զարգացմանը, ինչպիսիք են համակարգչի մտի ու էլից սարքավորումների գործածությունը (ստեղնաշար, մկնիկ, էկրան), թվայնացված սարքավորումների և էլեկտրոնային ռեսուրսների պարամետրերի վերլուծությունը (օրինակ՝ հիշողությունը, գույների քանակը, անհրաժեշտ ապարատային ռեսուրսները), թվայնացված սարքավորման աշխատանքային սկզբունքների ու ստեղծատվության պահպանումը, մշակումը և դրա փոխարնցման մասին պատկերացումների ստեղծումը (օրինակ, գործառնական համակարգի ու ֆայլի հասկացությունների վերլուծությունը, նաև այն բանի վերլուծումը, որ տեքստային գրաֆիկական և ձայնային նյութերը թվայնացված սարքավորման մեջ պահպանվում են միևնույն տեսակի միավորի մեջ):

Տեղեկատվական ու հաղորդակցական տեխնոլոգիաների գործածությունն ուսուցման գործընթացում նպաստում է աշակերտների մոտիվացիայի աճին: Բացի նրանից, որ ՏՀՏ-ի գործածությամբ հնարավոր է ավելի հարուստ, բազմերանգ ու դինամիկ ուսումնական նյութ ստեղծել և օգտագործել, դրա միջոցով նաև կարող ենք ուսումնական բովանդակությունը դարձնել ինտերակտիվ: Արդյունքում, աշակերտը ոչ թե ստեղծատվության պասիվ ստացողն է, այլ հենց ինքն է կարող փոփոխել ու նույնիսկ ստեղծել ուսումնական բովանդակությունը: Իսկ այս ամենը համապատասխանում է ուսումնական գործընթացի նկատմամբ ժամանակակից, կառուցողական մոտեցմանը, որը նախատեսում է գիտելիքի հայթայթում և ստեղծում հենց աշակերտի կողմից:

Տեղեկատվական ու հաղորդակցական տեխնոլոգիաների հիմնական նպատակն է իրազեկ, տեխնոլոգիական ձեռքբերումներն արդյունավետ գործածելու ունակություն ունեցող բարոյական և օրինապահ անհատի դաստիարակում, որը կկարողնա ինքնուրույն ձեռք բերել, կառավարել, մշակել, գնահատել, վերլուծել ստեղծատվությունը և, դրա հիման վրա, ինքնուրույն որոշման կայացումը, այնպիսի անհատի դաստիարակումը, որը գիտակցում է սեփական պատասխանատվությունը երկրի շահերի, ավանդույթների և արժեքների նկատմամբ, ինքն է ստեղծում արժեքներ և սեփական լուծման է ներդնում հասարակության առաջընթացի գործում:

Տեղեկատվական ու հաղորդակցական տեխնոլոգիաների ուսումնական դասընթացն ավարտելուց հետո աշակերտը պետք է՝

- իմանա ՏՀՏ-ի հետ կապված հասկացություններն ու տիրապետի համապատասխան գործառնություններին

- գիտակցի ՏՀՏ-ից օգտվելու սոցիալական, բարոյագիտական, շրջակա միջավայրի ու մարդկային գործոնի հետ կապված հիմնախնդիրները (ենթադրվում է տեղեկատվության ու ծրագրային ապահովման կիրառումը էթիկայի վարքականոնի և գոյություն ունեցող օրենսդրության պահպանությամբ):

- Պետք է տիրապետի թվայնացված արտադրանք ստեղծող միջոցներին:

- Տիրապետի հաղորդակցության թվայնացված միջոցներին:

- Տիրապետի հետազոտման թվայնացված միջոցներին (ենթադրվում է տարբեր աղբյուրներից տեղեկատվության որոնում, պահպանում, մշակում, վերլուծության հիման վրա, եզրակացությունների ձևակերպում):

- Կենցաղային և իրական հանգամանքում ծառայած հիմնախնդիրները լուծելիս՝ աշակերտը պետք է կարողանա օգտագործել ՏՀՏ:

- Կեղեկատվական ու հաղորդակցական տեխնոլոգիաների ուսուցման մեջ երկու մոտեցում է սահմանվել: Դրանք են՝ 1. ՏՀՏ-ն, որպես ինքնուրույն առարկա, 2. ՏՀՏ-ն այլ առարկաների հետ ինտեգրված: Որպես առանձին առարկա դասավանդելիս աշակերտը ձեռք է բերում անհրաժեշտ բազային իրազեկություններ: Դա հատկապես կարևոր է ուսուցման տարրական փուլում, երբ աշակերտը չի տիրապետում բազային կարողություններին և , համապատասխանաբար, նրա համար ավելի բարդ կլինի այս իրազեկությունները մշակել ՏՀՏ-ի այլ առարկաների հետ ինտեգրման ռեժիմում: Այն դասարաններում, որոնցում սահմանված չէ ՏՀՏ դասավանդել որպես առանձին առարկա, աշակերտների ՏՀՏ իրազեկությունների զարգացումը պետք է շարունակվի առանձին առարկաների շրջանակներում: Բացի այդ, թե՞ հատուկ նախագծերի, թե՞ տարբեր մրցույթների միջոցով պետք է նպաստել ՏՀՏ-ի ինտեգրմանը նաև այլ ուսումնական առարկաներում:

- Անհրաժեշտ է նաև վերահսկել ու սահմանափակել երբեմն տեղեկատվական տեխնոլոգիաների դերը: Տեղեկատվական ենթակառուցվածքների չեզոքության

ապահովման դեպքում (այսինքն մեկ սուբյեկտի կողմից նրա նկատմամբ վերահսկողության բացակայությունը) փաստացիորեն յուրաքանչյուր սուբյեկտ (անհատ, խումբ, կազմակերպություն, ձեռնարկություն), որն ունակ է արտադրել գիտելիքներ և օգտագործում է ինտերակտիվության ռեսուրսը, կարող է դառնալ առավել նշանակալից, քան պետությունը: Այսինքն, տեղեկատվական տարածությունը սկզբունքորեն փոխում է սուբյեկտների փոխազդեցության համակարգը այդ փոխազդեցությունների՝ տեղեկատվական տարածություն փոխադրման արդյունքում:

Տեղեկատվական ու հաղորդակցական տեխնոլոգիաների առարկայական ծրագիրը կազմված է ըստ իրազեկության մակարդակների: Առանձնացվում է տեղեկատվական ու հաղորդակցական տեխնոլոգիաների տիրապետման 3 մակարդակ:

1. մակարդակ

Մկանակ օգտվողի համար անհրաժեշտ գիտելիք ու կարողություններ. հիմնական սարքավորումների իմացություն, օպերատիվ համակարգ տեքստի հետ և մուլտիմեդիական տվյալների հետ աշխատանք (ստեղծում, խմբավորում), ֆայլերով գործառնություններ, համացանց և էլ-փոստ, գրասենյակային ծրագրերի փաթեթ:

2. մակարդակ

Հմուտ օգտվողի համար անհրաժեշտ գիտելիքներն ու կարողությունները, բացի նրանից, որ առաջին մակարդակի ուսումնական նյութը կրկնվում է ավելի խորացված ձևով, դրան ավելանում են ուրիշ, ավելի բարդ բաղադրիչներ: Գործող համակարգեր (ավելի խորը) ու գործող համակարգերի տարբերություն, էլեկտրոնային աղյուսակների գործածություն հիմնախնդիրների լուծման համար, սեղանադիր հրատարակման տարբերը, լայքի ձևավորման տարբեր:

3. մակարդակ

Երկու դասընթաց է նախատեսված: Դպրոցը դրանց միջև ընտրություն անելու հնարավորություն կունենա:

Որպեսզի դասապրոցեսի ընթացքում ուսուցչի համար ստեղծվեն բարենպաստ պայմաններ, անհրաժեշտ է նշել S2S-ի օգտագործման հիմնական առանձնահատկությունները.

- դիդակտիկ նյութերի ստեղծում և նախապատրաստում/առաջադրանքների տարբերակներ, աղյուսակներ, սխեմաներ, գծագրեր, ցուցապաստառներ և այլն/,
- ուսումնական նյութի վերաբերյալ պրեզենտացիայի/շնորհանդես/ ստեղծում,
- պատրաստի ծրագրային արտադրանքի օգտագործում,
- դասին նախապատրաստվելու, արտադասարանական միջոցառումների, ինքնակրթության համար ինտերնետ ռեսուրսների փնտրում և օգտագործում,
- կրթության և դաստիարակության արդյունքներին հետևելու համար մոնիթորինգի ստեղծում,
- տեքստային աշխատանքների ստեղծում,
- մեթոդական փորձի ընդհանրացում էլեկտրոնային տեսքով:

SZS-ների օգտագործմամբ ուղեկցվող դասերը իրենց պարզության, գեղեցկության և տեսանելիության շնորհիվ ուսումնական նյութի ընկալման ընթացքում առավել մեծ տպավորություն են թողնում սովորողների հոգեբանա-հուզական ֆոնի վրա:

Ուսուցման գործընթացում տեղեկատվական տեխնոլոգիաների նորարարությունների մասին խոսելիս, հարկ է անդրադառնալ էլեկտրոնային գրատախտակների նշանակությանը:

Ուսուցման գործընթացն ավելի զարգացավ, երբ համաշխարհային շուկայում հայտնվեցին էլեկտրոնային գրատախտակները, որոնք փոխարինելու եկան կավճով և մարկերով գրատախտակներին: Էլեկտրոնային գրատախտակը մեծ խթան հանդիսացավ հանրակրթական դպրոցներում ակտիվ ուսումնառության կազմակերպման համար, քանի որ սովորողները հնարավորություն ստացան պասիվ լսողներից վերածվել ակտիվ մասնակիցների, անմիջական կատարողների, զարգացան ոչ միան նրանց գիտելիքները, այլ նաև կարողություններն ու հմտությունները, իսկ ուսուցիչը դարձավ այդ գործընթացը խթանող, օժանդակող անձ, այդ էլ հենց պահանջում է աշակերտակենտրոն ուսուցումը:

«Ուսուցումն առավել արդյունավետ է, երբ դա ուրախություն է պատճառում»։ Ժ. Կլայնի այս խոսքերը կարելի է վերագրել էլեկտրոնային գրատախտակների

օգտագործմամբ ուսուցմանը: Հիրավի, ցանկացած գործողության կատարման բովանդակությունը, աշխատել մաքուր հարմարավետ պայմաններում, չկավճռոտել ո՞չ ձեռքերը, ո՞չ հագուստը, զրկվել բարձիկներին դիպչելու տհաճ զգացողությունից:

Էլեկտրոնային գրատախտակների կիրառման շնորհիվ ուսուցիչը հայտնվեց սովորողների ուշադրության կենտրոնում, նրանց հետ հիմնականում սկսեց շփվել դեմքով՝ ի տարբերություն ավանդական գրատախտակների, որոնց դիմաց ուսուցիչը դեմքով դեպի գրատախտակը կանգնած կարող էր մի ամբողջ դասաժամն գրել ու ջնջել:

Էլեկտրոնային գրատախտակները հնարավորություն են տալիս խնայել թանկարժեք ժամանակը, որի պակասն ունեն գրեթե բոլոր ուսուցիչները: Սարքավորման աշխատանքի համար նախատեսված Notebook ծրագիրը հնարավորություն է տալիս նոր դասը բացատրել ավելի արագ, ավելի արդյունավետ:

Նոր նյութի բացատրության համար ինտերակտիվ գրատախտակը դարձավ անփոխարինելի գործիք: Ուսուցիչը հնարավորություն ստացավ պահպանել դասը, հետագայում նրա կարևոր, առանցքային կետերին նորից անդրադառնալու, դասի ուժեղ և թույլ կողմերը բացահայտելու, ուժեղ կողմերը կրկին կիրառելու, իսկ թույլերը վերացնելու համար: Ուսուցիչները փորձի փոխանակման ավելի մեծ

հնարավորություն ստացան, կարող են տարբեր թեմաներով նյութեր պատրաստել և փոխանակել միմյանց հետ: [13,47-49]

1.2.Ինտերնետի ներթափանցումը կրթական համակարգ

Շուրջ 20 տարի առաջ, երբ ստեղծվում էր համաշխարհային սարդոստայնի հայեցակարգը, քչերն էին պատկերացնում, թե ընդամենը մի քանի տարի անց ինչ հեղափոխություն է կատարելու այն մարդկանց կյանքում: Այսօր աշխարհի բնակչության ավելի քան մեկ քառորդն օգտվում է ինտերնետից, և այդ թիվը շարունակում է աճել: Դժվար է պատկերացնել մարդկային գործունեության որևէ բնագավառ, ուր թափանցած չլինի համացանցը:

Համացանցի դերը առանձնահատուկ է կրթության և գիտության ոլորտներում: Ակնհայտ է, որ առանց կրթության գիտությունը չի կարող զարգանալ, այդ իսկ

պատճառով ինտերնետում շատ արագ տեղադրվեցին մեծածավալ կրթական պաշարներ, որոնք անընդհատ թարմացվում են:

Ժամանակակից աշխարհում կտրուկ աճել ու ընդլայնվել են տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների հնարավորությունները ինտերնետի ի հայտ գալով ու մարդու գործունեության բոլոր ոլորտները, այդ թվում կրթության, խոր ներթափանցմամբ: Ուսուցման էլեկտրոնային միջոցների օգտագործումը նկատելիորեն ազդում է կրթական համակարգերի վրա և նպաստավոր պայմաններ է ստեղծում ուսուցման իննովացիոն մեթոդների զարգացման համար: [18]

Տեղեկատվական տեխնոլոգիաների մասին մեր հասարակության մեջ կան շատ հակասական կարծիքներ, սակայն, ինտերնետի հետ կապված մեկ բան հաստատ է, մեր կյանքն այժմ դժվար է պատկերացնել առանց ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների:

Ինտերնետի դերը ուսուցան գործընթացում մեծ արդիականություն ունի:

Ուսուցման գործընթացում առավել կարևորվում է նրա դերը, քանի որ ինտերնետի միջոցով առավել մատչելի ու հասանելի է դառնում ուսուցումը: Ցանկացած մեզ հետաքրքրող հարցի պատասխանը կարելի է գտնել համացանցում: Ուսուցման գործընթացում լայն տարածում են գտել հատկապես էլեկտրոնային գրքերը, հոդվածները: Ինտերնետի օգնությամբ դուրսին է դառնում ծնող-ուսուցիչ կապը, ինչը շատ է կարևորվում ուսուցման գործընթացի լիարժեք կազմակերպման համար:

Անշուշտ, տեխնոլոգիաները պետք է ներթափանցեն ցանկացած ուսումնական գործընթաց, քանի որ այն օգնում է ուսումնական նյութն առավել կենդանի և հետաքրքիր դարձնելու համար:

Ժամանակակից ուսումը, մեծապես հենվում է հենց տեխնոլոգիաների ճիշտ և բազմակողմանի կիրառության վրա:

Այս դարում գիտունը և խելացին այլևս նրանք չեն, ովքեր կարող են իրենց գլխում պահել ամբողջ հանրագիտարանի ինֆորմացիան, այլ նրանք, ովքեր լավ գիտեն, թե որտեղից է հնարավոր ստանալ ամենալավ գիտելիքը տվյալ փոքր խնդրի վերաբերյալ և ինչպես է պետք համադրել իրար հետ տարբեր խորության և

ուրտաների գիտելիքները, որևէ խնդիր հաջողությամբ լուծելու համար կարևոր է լսարանները, լաբորատորիաներն ու դասարանները լավ տեխնիկայով զինել:

Տեխնոլոգիան, ինտերնետը, համագործակցության և կրթական էլեկտրոնային միջավայրերը և նույն սոցիալական ցանցերն այսօր անհրաժեշտ է դիտել որպես հանրային միջոց, գործիք, ենթակառուցվածք, ինչպիսիք են ճանապարհները, փոստը և հասարակության կենսագործունեության համար խիստ անհրաժեշտ այլ ենթակառուցվածքներ:

Ինտերնետի օգտագործումը զգալիորեն ընդլայնում է նյութի որոնման հաղորդման և յուրացման հնարավորությունները՝ որակական նոր բնույթ հաղորդելով ուսուցման կազմակերպմանը և ապահովելով ինքնակրթության ու շարունակական կրթության լայն հնարավորություն:

Ինտերնետում գործում են բազում ծառայություններ, որնք ճիշտ կիրառելիս այն դարձնում են անփոխարինելի գործիք: Արագագործ ինտերնետը հասանելի է դարձնում կրթական մի շարք ծառայություններ՝ հանրագիտարաններ, գեղարվեստական, գիտական, ուսուցողական և այլ բնույթի գրքեր, հոդվածներ: Համացանցի շնորհիվ այսօր արդեն իրողություն են գիտական, ուսուցողական և այլ տիպի կոնֆերանսները: [13,142-145]

Համակարգիչը չպետք է լինի դասարաններում հասանելի շոայլություն, այն պետք է մեր ձեռքում գործիք լինի, մեր իսկ զարգացմանը նպաստելու համար, որից կարող ենք օգտվել ցանկացած վայրում և ցանկացած պահի: Ուսուցիչները և ուսումնական ծրագրերը պետք է առաջադրեն աշակերտներին և ուսանողներին այնպիսի խնդիրներ, որոնց լուծումը պարզապես անհնար է առանց ինտերնետից տեղեկատվություն ստանալու և ցանցում համագործակցության և քննարկումների: Հենց տեխնոլոգիան է այն գործիքը, որով այսօր հնարավոր է ժամանակակից տարբեր գործնական հաջողությունների հասնել:

Այժմ այնքան է մեծացել տեխնոլոգիաների դերը, որ ուսուցիչը, բացի ուսուցանելուց, պետք է կարողանա ճիշտ կողմնորոշել աշակերտին տարբեր համացանցային տեղեկատվություններից ճիշտ օգտվել: Իսկապես շատ կարևոր է

աշակերտներին ճիշտ կողմնորոշել տեղեկատվության և գիտելիքների բազմազանության այս ահռելի տիրույթում:

Աշխատանքային և սոցիալական միջավայրերի, դրանցում գործածվող տեխնոլոգիաների հաճախակի փոփոխությունները մեր օրերի մարդուն ստիպում են անընդհատ յուրացնել նոր գիտելիքներ և հմտություններ, պատրաստ լինել շարունակական ուսման, բայց սա ճիշտ է ոչ միան մարդկանց, այլև կազմակերպությունների, ինչպես նաև ամբողջ հասարակության վերաբերյալ, քանի որ հասարակության կրթական մակարդակը և սովորելու կարողությունները սկզբունքային նշանակություն են ստանում երկրի զարգացման և միջազգային տնտեսական մրցունակության համար: Մարդկանց սովորելու ունակությունները մեծացնելու և գիտելիքն արդիականացնելու խնդրի առաջնահերթության գիտակցումը, իր հերթին, ենթադրում է մշտական աշխատանք:

Տեղեկատվական դարաշրջանում կրթության բնույթի մեջ կատարվող արմատական փոփոխությունները սերտորեն առնչված են տեղեկատվության և հաղորդակցության արդի միջոցների զարգացման և տարածման հետ: Մի կողմից, տնտեսության և հասարակական գործունեության տարբեր ոլորտներում տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների (ՏՀՏ) տարածումը հրատապ է դարձնում աշխատողների կողմից համապատասխան գիտելիքների և հմտությունների յուրացման, այսինքն կրթության և թրեյնինգի հարցը, մյուս կողմից կրթության ոլորտում նոր տեխնոլոգիաների ներդրման միջոցով կրթության համակարգի արդիականացումը, ուսուցման և ուսումնառության արդյունավետությունը:

Հայաստանում ինտերնետի տարածման սկզբնական շրջանում մարդիկ համապատասխան կրթություն ստանում էին տարերայնորեն ի հայտ եկած մասնավոր կրթական հաստատություններում, ինչպես նաև տարբեր միջազգային կազմակերպությունների հովանավորությամբ իրականացվող ծրագրերի շնորհիվ: Այժմ իրադրությունն աստիճանաբար փոխվում է ՏՀՏ-ի իմացության տարրերը մտնում են դպրոցական և համալսարանական ծրագրեր՝ միաժամանակ ձևավորելով ինտերնետի հանրային մատչելիության կենտրոններ:

Նոր տեխնոլոգիաները նպաստում են կրթության որակի բարձրացմանը, դրանց կիրառումը որակապես փոխում է դասախոսի դերը, երկար և անհրապույր դասախոսություններին փոխարինում են նոր մեթոդներն ու միջոցները: [19]

Ժամանակակից կրթական ոլորտում տեխնոլոգիաները կիրառում են ուսումնական նյութը շարժման և զարգացման մեջ ցուցադրելու, այն պարզաբանելու համար:

Այսօր համակարգչի և ինտերնետի միջոցով կարելի է ներկայացնել ձայնային և տեսագրված հատվածներ, ուսումնական գործընթացը դարձնել տեսանելի, կատարել ավելի արդյունավետ հետազոտություններ:

Համացանցային գործիքները հեշտացնում են աշխարհագրական տարբեր վայրերում գտնվող ուսուցիչների փորձի փոխանակումը, ինչպես նաև հաղորդակցումը ուսուցիչների և աշակերտների միջև:

Ինտերնետային տարբեր ծրագրերի միջոցով, աշակերտները ծանոթանում են, մշակութային փոխանակում կատարում, բարելավում իրենց լեզվական իմացությունը: Ավանդական նամակագրության համեմատ, առցանց հաղորդակցումն ավելի արագ և արդյունավետ է, իսկ դպրոցական փոխանակման համեմատ, պակաս ծախսատար է:

Հետազոտություն կատարելու համար համացանցը անհրաժեշտ միջոցներ է տրամադրում այն մարդկանց, ովքեր հնարավորություն չունեն օգտվելու գրադարաններից:

Որոնողական լայն հնարավորությունները և էլեկտրոնային հաղորդակցությունը դարձել են ինչպես դասավանդողների, այնպես էլ սովորողների առօրյայի անբաժանելի մասը:

Ինտերնետում ներկայացված են հսկայածավալ ուսումնական նյութեր գիտելիքների տարբեր բնագավառներից՝ այդ թվում անվճար: Օգտագործողին հետաքրքրող ռեսուրսների որոնման համար օգտագործվում են հատուկ կայքեր՝ որոնման մեքենաներ (search engines), որոնք հավաքում և պահպանում են տեղեկություններ ինտերնետում այլ կայքերում ներկայացված նյութերի մասին և ապահովում են օգտագործողների ինֆորմացիոն կարիքները:

Առավել օգտագործվող և արդյունավետ որոնման կայքը Google ընկերությունն է, որի միջոցով կամակերպվում է բազմալեզու, այդ թվում անգլերեն, ռուսերեն, հայերեն ռեսուրսների որոնումը: Որոնումը կազմակերպվում է որոնման հատուկ տեքստային նկարագրերի՝ հայտերի միջոցով: Որոնման կայքը վերադարձնում է նյութերի ցուցակը, որից օգտագործողը կարող է ընտրել և վերբեռնել առավել հարմարները: Google որոնման կայքի հասցեն www.google.com կամ www.google.am է: [20]

Հանրակրթական դպրոցն ավարտելուց հետո աշակերտը պետք է բազային գիտելիքներ ունենա տեղեկատվական ու հաղորդակցական տեխնոլոգիաների մասին, նաև պետք է ունենա դրանց կիրառման գործնական փորձառություն, որը բավական կլինի ինչպես հետագա մասնագիտական գործունեության, այնպես էլ հաջորդ աստիճանում ուսումը շարունակելու համար:

1.3. Համակարգչային տեխնոլոգիաների կիրառումը դասի ընթացքում

Ժամանակակից դպրոցը , կրթական հաստատությունը , հնարավոր չէ պատկերացնել առանց թվայնացված տեխնիկայի՝ համացանցի: Արդի պայմաններում ահռելի տեղեկատվություն է արտացոլում էլեկտրոնային հիշողությամբ սարքերում՝ բազմազան և բազմաբնույթ ձևերով ծառայելով մեկ նպատակի՝ արագորեն ձեռք բերել տեղեկություն: Տարիներ շարունակ ուսուցման ընթացքում օգտագործվել են տպագիր նյութերը, կավիճները, ավանդական գրատախտակները , ավանդական դասագրքերը և տետրերը:

Մրանց կիրառությունը սահմանափակում էր ուսուցման տեղրի և ժամկա ընտրության հնարավորությունը: Համակարգչային և հեռահաղորդակցական տեխնոլոգիաների զարգացման արդյունքում հնարավոր դարձավ ուսուցումը կազմակերպել ավելի հետաքրքիր և արդյունավետ:

Մասնագիտական որակավորման բարձրացման բոլոր դասընթացներում շերտվում է, որ համակարգիչը դպրոցում դիտարկվում է որպես ուսումնառության հիմնական միջոցներից մեկը, իսկ ինֆորմատիկան՝ ուսումնական նյութի արդյունավետ յուրացմանը նպաստող համապիտանի առարկա: Ուստի համակարգչային և հեռահաղորդակցական տեխնոլոգիաների համատեղումը

ընդլայնում է դասասենյակն իր պատերից մինչև աշխարհի տարբեր անկյուններ՝ դրանով հեռակա ուսուցումը դարձնելով հնարավոր բոլորի համար:

Համակարգչային տեխնոլոգիաները նպաստում են ուսումնական գործընթացում իրականացվող գործողությունների հեշտացմանը և ավելի հետաքրքիր դարձնելուն: Օրինակ՝ հեշտացնում են աշխատանքը տեքստերի (MS Word) , աղյուսակների, գրաֆիկների (MS Excel), տվյալների շտեմարանների (MS Access)և նյութի ներկայացման (MS Power Point) հետ:

Հեռահաղորդակցական տեխնոլոգիաները մեծամասամբ կապված են համացանցի և նրանում առկա շտեմարանների հետ: Սրանք ապահովում են լայնամասշտաբ տեղեկատվական աղբյուրների, անհրաժեշտ նյութերի և գրքերի մատչելիության աղբյուրների, անհրաժեշտ նյութերի և գրքերի մատչելիության աշակերտների և ուսուցիչների համար: Դրանց միջոցով կարելի է այցելություններ կազմակերպել աշխարհի տարբեր ճանաչված թանգարաններ, հեռակա գիտաժողովներ և այլն:

Ժամանակակից տեխնոլոգիաների կիրառությունը ուսումնական գործընթացում ունի մի շարք առավելություններ:

1. ուսուցման ճկունություն , երբ ուսուցումը հնարավոր է կազմակերպել հեռակա և վիրտուալ կերպով (օրինակ՝ Skype)

2. աշակերտների ուսուցման խթանում, քանի որ աշակերտները սիրում են աշխատել համակարգչով, արդյունքում դասը դառնում է ավելի գրավիչ նրանց համար

3. գրավոր և բավավոր, ինքնուրույն և համագործակցային ունակությունների զարգացում, քանի որ ներկայումս առկա են մի շարք ծրագրային միջոցներ (Armenian PowerSpell),որոնք իրականացնում են տեքստերի սրբագրում,

4. բառարանային աշխատանքների կազմակերպում էլեկտրոնային հատուկ բառարանների (ABBY Lingvo, Google translate) միջոցով,

5. ինքնուսուցման խթանում

6. օգնություն մասնագիտության ընտրության հարցում,

7. աշակերտների նորարար և ստեղծագործական ունակությունների զարգացում:

Ուուցման գործընթացն առավել հետաքրքիր է դառնում աշակերտների և նպատակահարմար ուսուցչի համար, եթե դասապրոցեսը , մասնավորապես՝ կերպարվեստի երաժշտության դասաժամերն անցկացվում են ցուցադրվող, տեսալսողական կամ թվայնացված այլ նյութերի կիրառմամբ, հատկապես, եթե դրանք նպաստում են դասաժամի տևողության խնայողությանը:

Դասապրոցեսում կիրառվող զննական նյութերից են նկարները, մոդելները, քարտեզները, աղյուսակները, դիագրամաները, գծագրերը դրանք կարելի է զուգակցել ուսումնական տեխնիկական միջոցների հետ՝ կինոֆիլմեր, երգեր, ձայնագրություններ և այլն; Տեխնիկական այս միջոցների օգտագործումը անհրաժեշտ պայմաններ է ստեղծում արագորեն վերադառնալու և ցուցադրվածը կրկին դիտելու , ինչպես նաև աշակերտների ընկալման արդյունավետությունը ստուգելու համար:

Արդյունավետ է կիրառել էլեկտրոնային գրատախտակը երաժշտության դասաժամին , խաչբառները լուծելիս կամ ինտերվալների մասին խոսելիս, ինչպես նաև ինտերակտիվ ուսուցման ընթացքում: Սա գործնականում ավելի տպավորիչ և արագ եղանակ է, քան գրատախտակին կավիճով գրելը, որը մեծ ջանքեր և ժամանակ է պահանջում ուսուցչից, թուլացնում է աշակերտների ուշադրությունը: ՏՀԱ-ների (տեղեկատվական և հաղորդակցային տեխնոլոգիաներ) կիրառությունը մեծապես կօգնի այն դեպքերում, երբ աշակերտը առողջական խնդիրների պատճառով բացակայում է: Այս դեպքում արդեն ուսուցիչը կարող է օգտագործել հեռավար ուսուցման հնարավորությունը:

Արդի պայմաններում համացանցով կամ նախապես պատրաստված էլեկտրոնային սահիկահանդեսով ցուցադրվող նյութը դարձել է ցանկացած դասին ուղեկցող դիդակտիկ նյութ, որը կարևորվում է նրանով, որ պակասել են դպրոցական էքսկուրսիաները, այցելությունները թանգարաններ , ցուցահանդեսներ: Բազմաթիվ թեմաների յուրացմանը, հաղորդակցմանը, ամրապնդմանը նպաստում են գծագրերը,

գրաֆիկական կառույցները, որոնք կարելի է ցուցադրել գունավոր, ընդգծված տարբերակներով, անհրաժեշտ ձևափոխություններով:

Հիանալի միջոց է խմբային աշխատանքները թեմային համապատասխան երաժշտությամբ ուղեկցելու տարբերակը, որի ընթացքում ուսուցիչն էլ կարող է հետևել խմբերին և ուղղորդել կամ զբաղվել տնային աշխատանքի ստուգմամբ, որը, ինչպես հայտնի է, շատ կարևոր նախապայման է ուսուցման ընդհանուր գործընթացում:

Այսպիսով, ուսուցման կազմակերպման տարաբնույթ եղանակները, մեթոդները և էլեկտրոնային տեխնոլոգիաների, տեղեկատվության կրիչների առկայությունը դասապրոցեսում նպաստում է դասագրքից դուրս տեղեկություն ստանալուն, տեղեկության մշակմանը, պահպանմանը, հաղորդմանը, զանազան մոդելների կառուցմանը: Աշակերտների ուշադրության պակասը, հետաքրքրության բացակայությունը բացասական ազդեցություն են ունենում կառուցողական և հիմնավոր գիտելիքի ձեռքբերման վրա: Ուստի, ժամանակակից մեթոդները և տեղեկատվական այլազան միջոցները պետք է լրացնեն այն բացը, որ առաջանում է բացառապես դասագրքերով աշխատելիս:

ԳԼՈՒԽ 2

ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

2.1 Փորձարարական աշխատանքի վերլուծություն և ամփոփում

Աշխատանքի հետազոտական մասը նվիրված է դպրոցում ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների գործնական կիրառմանը:

Պրակտիկայի անցկացման վայրը Մեղրի շրջանի գ.Լեհվազի միջն. դպրոցն է: Հարկ է նշել, որ թեև դպրոցը մասշտաբով փոքր է և աշակերտների թիվը չի գերազանցում 100-ից ավելին, բայց դպրոցը հարուստ է տեղեկատվական միջոցներով: Դպրոցում կա առանձին դասասենյակ հատուկ հարմարեցված ինֆորմատիկա դասաժամի համար: Դասասենյակում գործում են նորագույն տեխնոլոգիաներին համապատասխան 10 համակարգիչներ: Առկա է պրոյեկտոր, որը շարժական է և շատ անգամ

օգնում է դպրոցում անց կացվող միջոցառումներին, առարկայական շաբաթներին և բաց դասընթացներին:

Ի սկզբանե տպավորությունն այնպիսին էր, որ սովորողներն հնարավորություն ունեին զարգացնել իրենց համակարգչային գրագիտությունը միայն ինֆորմատիկայի ժամին, այն էլ շաբաթը մեկ օր:

Գեմ կացրել երկրորդ դասարանում Մայրենի առարկայից հետաքրքիր,ինտերակտիվ դասեր:Նախ և առաջ հարկ է նշել,որ երկրորդ դասարանի դասագրքում բազմաթիվ

են այնպիսի դասանյութերը,որոնք երեխան QR կոդերի միջոցով կարող է լսել և դիտել: Դա ևս նպաստում է երեխայի հնչյունային լսողության զարգացմանը:

Ինտերակտիվ դասերի միջոցով հնարավորություն է ստեղծվում ավելի խորը ըմբռնել և հասկանալ դասի առանձնահատկությունները: Դասի շրջանակում աշակերտները հնարավորություն ունեն մեղիա հարթակում կատարել տարատեսակ ինտերակտիվ վարժություններ:

Դասագրքի հենց առաջին էջից աշակերտը ծանոթանում է դասագրքի հետ QR կոդի միջոցով:<<Ո՞վ եմ ես>> թեմայի շրջանակում անցկացրած դասի ընթացքում առողջանությանը ընթերցելուց հետո առաջարկել էմ,որ միասին դիտենք մի տեսահոլովակ,որտեղ բանաստեղծության հերոսը՝երկրորդ դասարանցի մի մանուկ,ներկայացնում է,թե ով է ինքը:Այնուհետև քննարկեցինք տեսահոլովակը և շարունակեցինք դասը:Այդ օրվա հանձնարարությունն էր՝ տանը QR կոդի միջոցով լսել և վարժ ընթերցել բանաստեղծությունը:Առավել հետաքրքրական էր հաջորդ օրվա դասը և հանձնարարությունը:Բազմապիսի հարցեր և գրավոր առաջադրանքներ կատարելուց հետո երեխաները հնարավորություն ունեցան

լիցքաթափվելու` դիտելով <<Հնչյուն-տառի երգը>>:Նման հնարավորությունը երեխաներին թույլ է տալիս ավելի հեշտ սովորել կարճ բանաստեղծությունները:

Վերլուծությունը ցույց է տալիս, որ յուրաքանչյուր երեխա կարող է սովորել, սակայն դա իրականանալի է այն դեպքում, եթե դա նրան հետաքրքիր է:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ դարձյալ կարևորը դասավանդման ճիշտ և արդյունավետ մեթոդներ ընտրելն է:

Նորագույն տեխնոլոգիաները մեծ հնարավորություն են բացում ուսուցիչների համար` նրանց խոսքը և պատմությունը ամրագրվում է տեսաֆիլմով, ձայնագրությամբ, վավերագրական ֆիլմով կամ դասին վերաբերյալ տեսահոլովակով: Աշակերտները վիրտուալ կերպով տեղափոխվում են անցյալ, լսում են երգչի կամ երգչուհու բնական ձայնը, ունկնդրում են հայտնի դիրիժորների վարած կոնցերտները: Ուղղակի անհնար կլիներ այսօրվա սերունդի աշակերտներին պատմել Կրմիտասի մասին օգտվելով միայն դասագրքից` թույլ չտալով լսել Կրմիտասի բնական ձայնը կամ նրա լավագույն աշակերտներից մեկի` Արմենակ Շահմուրադյանի բնական ձայնը և դաշնամուրային կատարումը: Թեև փորձարարական աշխատանքը կատարվել է գյուղական դպրոցում, բայց այնուամենայնիվ վստահ եմ, որ ժամանակակից սերունդի երեխաները կարիք ունեն դպրոցում ստանալ ավելին քան կստանային փողոցում, տանը կամ դպրոցից դուրս յուրաքանչյուր վայրում: Դպրոցը անընդհատ իր առջև պետք է դնի կատարելագործվելու և ժամանակի հետ առաջ ընթանալու խնդիրը:

Լեհվագի միջն. դպրոցում բացի ինֆորմատիկայի համար հատկացված դասասենյակից գործում է նաև անզլերեն առարկայի դասասենյակը: Դասասենյակը կահավորված է, գործում է նոր համակարգիչ, պրոյեկտոր, նոր գրադարան: Անզլերեն և ռուսերեն լեզուների հանդեպ սեր և հակում ունեցող աշակերտները հնարավորություն ունեն մասնակցելու արտադասարանական խմբակների: Կարող եմ վստահ ասել, որ երեխաների հոսքը պայմանավորված է դասարանում գործող տեղեկատվական և հաղորդակցային տեխնիկայի առկայության պատճառով: Պրոյեկտորի օգնությամբ երեխաները ծանոթանում են արտասահմանյան կուլտուրային, սովորություններին, ավանդույթներին և այլն:

Անցկացված պրակտիկայի ընթացքում պարզ դարձավ, որ հնարավոր չէ լավագույն արդյունքի հասնել միայն դասագրքի օգնությամբ, եթե նույնիսկ այն լավագույնն է: Ուսուցիչը պետք է շարունակ հետազոտի, կատարելագործի իր կողմից դասավանդվող առարկայի դասավանդման մեթոդները:

Կարևոր է, որ ուսուցիչը օգտագործի դասավանդման ավանդական և նորագույն արդյունավետ մեթոդներ, կիրառի դերային խաղեր, խաղային հնարներ, այս ամենը համատեղելով նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաների հետ, քանզի համակարգիչն ունի մի յուրահատկություն, որն ի հայտ է գալիս այն ուրիշին որպես ուսուցանելու գործիք օգտագործելիս: Այս սարքը կարող է շատ «սիրալիր» կերպով շփվել օգտվողի հետ և երբեմն անգամ ըմբռնումով մոտենալ անգամ այն օգտատիրոջը, ով կրկնում է նույն արտահայտությունը մի քանի անգամներ:

Փորձը ցույց է տալիս, որ համացանցը զարգացնում է սովորողների ինքնավստահությունը, դասարանում խմբակային աշխատելու հմտությունները, ստեղծում է բարենպաստ պայմաններ ուսուցման համար՝ հանդիսանալով ինտերակտիվ մոտեցման գործիք: Այն կարող է օգտագործվել որպես լրացուցիչ գիտելիքների ստուգման աղբյուր:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ամփոփելով աշխատանքը կարող ենք կատարել հետևյալ եզրակացությունները՝

1. Այսօր, ժամանակակից սերունդ կրթելու և դաստիարակելու համար անհրաժեշտ է կիրառել նորարար տեխնոլոգիաներ և կրթության նոր մեթոդներ:

2. Կրթական համակարգը կարիք ունի նոր մոտեցումների և մեթոդների ներմուծման, որը կնպաստի կրթության որակի բարձրացմանը: Հենց դրան էլ նպաստում է ուսուցման գործընթացում տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրումը:

3. Հանրակրթության ոլորտը տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման գործում դեռ շատ անելիքներ ունի:

4. Դպրոցում կատարած սոցիոլոգիական հետազոտությունների համաձայն, իրավիճակը դպրոցում կարող է կտրուկ փոխվել, եթե լինեն համապատասխան պայմաններ՝ բոլոր առարկաների համար մշակվեն համապատասխան ծրագրեր, կատարել ուսուցիչների որակավորման բարձրացում, սակայն այդ ամենն անլիարժեք կլինի, եթե դասարաններում համակարգիչների պակաս նկատվի:

5. ՏՀՏ-ի տարրերը պետք է մտնեն դպրոցական և համալսարանական ծրագրեր և դառնան դրանց անբաժանելի մասը: Այսօր հայաստանյան դպրոցներից շատերում կիրառվում են համակարգչային և ինտերնետային ամենապարզ գիտելիքներ: Մինչդեռ համակարգիչները չպետք է դասարաններում հանես գան որպես շռայլություն և հասանելի լինեն միայն ինֆորմատիկայի դասընթացի ժամանակ:

6. Դասապրոցեսի ընթացքում պետք է կիրառվեն հնարավորինս մեծ թվով ինտերակտիվ մեթոդներ, քանի որ այսպիսի մեթոդների կիրառումը նպաստում է ուսուցման գործընթացի բարելավմանը, ակտիվացնում և ստեղծագործ է դարձնում սովորողների և դասավանդողների անհատական և խմբային աշխատանքը:

7. Նոր տեխնոլոգիաները նպաստում են կրթության որակի բարձրացմանը, դրանց կիրառումը որակապես փոխում է դասախոսի դերը, երկար և անհրապույր դասախոսություններին փոխարինում են նոր մեթոդներն ու միջոցները:

8. Ժամանակակից կրթական ոլորտում տեխնոլոգիաները կիրառում են ուսումնական նյութը շարժման և զարգացման մեջ ցուցադրելու, այն պարզաբանելու համար:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աստվածատրյան Մ. և համահեղ. Տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումը հանրակրթական դպրոցում: Ուս. ձեռնարկ- Երևան.- «Աստղիկ».- 2004.-232 էջ:

1. Եսայան Ա.Ն. և համահեղ. «Ինֆորմատիկա», 9-10-դ դասարաններ, 2005:

2. Համբարձումյան Ս. Տեխնոլոգիական միջոցների կիրառումը ՀՀ ավագ դպրոցներում որպես կրթական բարեփոխումների իրագործման բաղադրիչ.- Ակնարկներ ամերիկյան դպրոցի մասին, հայ տնօրենների տպավորությունները և մտորումները.- Ձեռնարկ.- Երևան.- «Յունիպրինտ».- 2003.- էջ 31:

18. <http://www.informika.ru/>

19. <http://www.internet15.narod.ru>

20. <http://shkolazhizni>